ՍԱՐԻՈՐ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1899

1702

Ողբիւր-Տարազի հրատարակութիւն № 56

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ԹԻՖԼԻՍ
Տպ. Կ. Մարտիրոսեանցի || Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1|2.
1899

11-42

Дозв. цензурою. 25-го мая 1899 г. Тифлисъ.

2004

ԵՍ ԱՐՁԱՆ ԵՄ ԿԱՆԳՆԵՑՐԵԼ

—

Ես արձան եմ կանգնեցրել անձեռագործ լինձ համար,
Որպէս ուղի չի կոխկրտուել նա ոտքի տակ մարդկութեան,
Իմ արձանը վեր է անչափ իր գլխովը անիսոնարհ,
Մինչև անդամ Աղէքսանդեան բարձրը սիւնից անսասան։
Ամբողջապէս ես չեմ մեռնիլ, հոգիս կապրի անդադար,
Իբրև դիակ՝ նա չի փտիլ, կըսաւառնի եթերում.
Իմ անունը փառաւորեալ չի մոռացուիլ դարէդար,
Քանի որ երգ կըզօրանչի, թէկուզ մի հատ, աշխարհում։
Իմ հրուչակը կըտարածուի Ռուսաստանում բովանդակ,
Եւ իմ մասին խօսք կըբացեն ժողովուրդներ զոհունակ.
Լեհաստանի հրպարտ որդին և թունդուզը վայրենի,

Աղատասէր ֆինն ու զալմըխ իրանց լեզ-
ուով մայրենի։
Եւ ես երկար պիտի լինեմ ազգիս համար
սիրական,
Որ իմ քնարի թովիչ ձայնով միշտ եղել
եմ օգտակար.
Աղատութեան զովքն եմ զովել ընդդէմ կո-
պիտ բըռնութեան,
Գրքոյրիւն եմ ես քարոզել դէպի ան-
կեալն ու տրկար։
Աստուածային վեհ պատգամին եղիր,
Մուսա, հընազանդ,
Առանց պըսակ պահանջելու, անբիծ պա-
հիր սուրբ աւանդ,
Զրվախենաս զըրկանքներից և նահանջես
փոքրոգի,
Նանիր փառքից հրապուրելով՝ կորցնես
փառքը երկընքի։

Զաւադ բէգ Պալուդեան

ՋՐԱՀԵՂԶԸ

(Утопленник)

—

Երբ վազեցին մանուկները
Ու կանչում են հօրն շտապ.
«Ա՛պի, ա՛պի, եկ մեր թօռը
Մեռել հանեց գետի ափ»։
—Սուտ է՛ք ասում, շան լակոտներ,
Գոռաց Հայրը ահաբեկ.
Սպասեցէ՛ք դուք հալա դեռ,
Մեռելն յետոյ կըտեսնէ՛ք։

«Դիւան կըգայ—ջուղաբը տուր.
Ցաւի միջում կըմնամ...
Հնար չըկայ. բե՛ր, ա՛յ կնիկ,
Ձորերս տուր—մի գընամ։
«Ո՞ւր է մեռելն։—Ա՛յ ա՛պի, ա՜յ։
Ճիշտ որ գետի եզերքին
Թաց թօռի մօտ, գետնի վրայ
Երևում էր ընկած դին։

Ձարհուրելի դիակն ուռել,
Կապրտել էր այլանդակ։
Արդեօք անբախտ մի թշուառ էր
Հանգիստն առած ջրի տակ.

Մի գետակուր ձկնորս էր այն
Թէ գինեմոլ մի ջահել,
Թէ անզգոյշ վաճառական
Գողերի էր պատահել...

Ինչին է պէտք. աչք ածելով
Հասալում է գիւղացին,
Ոտից բռնած ետ, քարշ տալով,
Ջուրն է տանում խեղդուածին.
Եւ թիակով գետի եզրից
Ջուրը հրեց նա նորան,
Եւ գիակը գնաց՝ նորից
Փնտրել խաչ ու գերեզման։

Մեռելն երկար ջրի միջին
Յած էր իջնում ճօճելով,
Աչքով ճամբեց մեր գիւղացին
Ու տուն դարձաւ կանչելով.
— Դէսը կորէք, ա՛յ լակոտներ.
Եկէք, բան տամ ձեզ— ուտենմ,
Ամա թէ որ ձէն էք հանել,
Ինքան կըտամ— կըսպանեմ»։

Գիշերն ուժգին բուք վեր կացաւ.
Գետն ելնում է, որոտում...
Մարիսը արդէն այրւեց-Հանգաւ
Լուռ ու ծրխոտ խրճիթում։

Ողջ քնած են։ Անքուն պառկած
Միտք է անում զիւղացին։
Բուքն ոռնում է. մէկ էլ, յանկարծ,
Լուսամուտը բախեցին...

«Ո՞վ ես։—Ներս թող, ա՛յ տանտէր, ներս»։
Ի՞նչ է ցաւդ... կէս գիշեր,—
—Ինչ ես շրջում Կայէնի պէս.
Ինչ չար հողմ է դէսը քշել։
Ինչ անեմ քեզ, ասա, հիմի.
Նեղ է տեղներս, տունը մութ...
Ու ծոյլ ձեռքով, տրտնջալով
Բաց է անում լուսամուտ։

Ցոլում է լոյսն ամպի տակից.
Ահա կանգնած... մի մերկ մարդ.
Ջուր է թափում նորա միրքից,
Բաց են աչքերն ու անթարթ։
Կախ են ընկած բազուկները,
Ողջ կարկամած սոսկալի,
Մարմնին կպած քառչանդները
Ահեղ սեւին են տալի։

Ահից մարեց՝ ճանաչելով
Իր մերկ հիւրին նա յանկարծ.
Փեղկը զարկեց։ Նա, դողալով,
«Ա՛յ դու ճաքես», քրթմընջաց։

Մտքերն իրար խառնուեցին,
Մինչև լոյսը նա դողում,
Մինչև լոյս դուռն ու լուսամուտ
Բախում էին ու բախում։

Ամբոխն ահեղ գրոյց ունի,
Թէ այս դէպքից գիւղացին
Սպասում է ամեն տարի
Միշտ նոյն օրը խեղդուածին։
Խառնուում է օրն առաւօտից,
Գիշեր գալիս բուք ու մութ,
Ու խեղդուածը ամբողջ գիշեր
Բախում դուռն ու լուսամուտ։

Յովհաննէս Թումանեան

ՄԻ ԵՐԳԻՐ ՀՔՆԱՂ

—

Մի երգիր, հքնաղ, իմ ներկայութեամբ
Դու տխրաղդեցիկ Վրրաստանի երգ.
Յիշեցնում է միշտ նա ինձ դառնութեամբ
Եւ մի ուրիշ կեանք և հեռու եզերք։

Յիշեցնում է նա, աւա՜ղ, լի յոյզով,
Քո անաղարոյն, խիստ եղանակներ.
Ե՛ւ դաշտ և՛ գիշեր և լուսնի լուսով
Հեռաւո՛ր, թշուառ կուսի գիմագծեր...

Այն օրհասական ըստուերն աննման
Մոռանում եմ ես, երբ քեզ եմ տեսնում,
Բայց երգում ես դու — և իմ յանդիման
Նորից եմ նրան ինձ պատկերացնում։

Մի երգիր, հքնաղ, իմ ներկայութեամբ
Դու տխրաղդեցիկ Վրրաստանի երգ.
Յիշեցնում է միշտ նա ինձ դառնութեամբ
Ե՛ւ մի ուրիշ կեանք և հեռու եզերք։

Ոնովրիոս Ա.Նովիեան

ՊՕԷՏԻՆ

—

Պօէտ, դու բնաւ մի հրապուրիչ համայնքի սիրով!
Բուռն զովեստի վաղանցուկ ձայնը կլլուի շուտով.
Կրկատապարտի անմիտը, վրրաղ սառը կրկնդան,
Սակայն դու եղիր հաստատ, անսասան, հանդիստ ու դաժան:

Դու թաղաւոր ես—ապրիր միայնակ! Ուր որ քո անկախ
Խելքը քեզ տանի—գնա համարձակ, ազատ ու անվախ,
Հասունացնելով սիրած խոհերիդ քաղցր պտուղներ,
Վեհ զորձքիդ համար չըպահանջելով վարձ ու նէրներ:

Քո մէջ են նոքա: Մեծ դատաւոր ես ինքըդ քեզ համար,
Բոլորից էլ խիստ դու ես դին դնում դորձիդ անաչառ:
Քո զորձից զոհ ես, դու խստապահանջ գեղարուեստագէտ?
Գոհ ես դու արդեօք? Դէ ուրեմն թող ամբոխը տգէտ
Անարդի նորան, վառող կրրակիդ սեղանին թրքի,
Մանկան չարութեամբ սուրը զոհարանդ ցնցի, տատանի!

Յարութիւն Թումանեանց

ԳՆՉՈՒՆԵՐ

—

Բեսարաբիայի տափաստանների
Միջով թափառում են գնչուները։
Հասել են նրանք մի փոքրիկ գետի,
Բացել նրա ափին մաշուած վրանները։
Ուրախ է նրանց իջևանն, ինչպէս
Ազատութիւնը. քունը՝ անվրդով
Բաց երկնքի տակ։ Կիսով չափ գորգով
Ծածկուած սայլերի անիւների մէջ
Վառւում է կրակը. նրա շուրջ շարուած է
Ողջ ընտանիքը, ընթրիք պատրաստում.
Կրծում են խոտը ձիանը դաշտում,
Իսկ ընտանեցրած արջը պառկած է
Վրանի ետևը առանց շղթայի։
Ուրախ է հնչում տափաստանների
Միջում ամեն բան. թէ ընտանիքի
Խաղաղ հոգսերը, որը արևի
Ծագելուն էգուց ճամբայ պիտի ընկնի,
Թէ կանանց երգը, թէ մանկանց ճիչը,
Թէ սայլերի վրայ երկաթի ծեծը։
Բայց ահա տիրում է թափառական
Բանակին քընի անդորրութիւնը
Եւ տափաստանում լըսւում է միայն
Ձիու խրխինջըն ու շան հաչիւնը։
Հանդարտ է շուրջը. բանակը լուռ է.
Անիւների մէջ հանգչում է կրակը,
Միայն լուսինը լուսաւորում է
Երկնքի ծայրից նիրհող բանակը։

Բայց դեռ մի վրանում չէ քնած ծերուկը.
Արդէն հանգչում է նրա առաջ կրակը,
Բայց նա մրտախոհ նայում է հեռու
Զոգիով պատած գիշերեան դաշտը։
Նրա մատաղահաս միակ աղջիկը
Գնացել է դատարկ դաշտը զբօսնելու.
Սովոր է փոքրուց նա արձակ կեանքի։
Կրվերադառնայ։ Բայց մօտենում է
Եւ կէս գիշերը. ահա թողնում է
Լուսինը անգամ հեռու երկընքի
Փայլուն ամպերը, իսկ նրա աղջիկը
Չկայ ու չկայ. հանգչում է կրակը
Եւ սառչում ծերի աղքատ ընթրիքը։

Բայց և ահա նա։ Նրրա ետևից
Մի երիտասարդ գալիս է դաշտից։
Նա գնչուներին տեսքով չէ նման։
«Հայրիկ, ասում է հօրը Զեմֆիրան,
Մեզ հիւր եմ բերում. բլրի ետևից
Ես նրրան գտայ դատարկ դաշտի մէջ
Եւ հրաւիրեցի մեր բանակն իսկոյն։
Ուզում է լինել նա գնչու մեզ պէս.
Օրէնքն է նրրան սաստիկ հալածում
Ու նա փախչում է իւրայիններից.
Բայց ես կրդառնամ նրան ընկերուհի.
Անունն Ալեքօ է. այսօրուանից
Նա պիտի ինձ հետ անբաժան լինի։

Ծերուցին

Ես շատ ուրախ եմ։ Մինչ էգուց մընա
Մեր աղքատ վրանի հովանու տակը։
Կամ թէ աւելի, թէ սիրտրդ կըտայ։
Ես այսօրուանից հացըն ու յարկը

Պատրաստ եմ քեզ հետ բաժանել ընդմիշտ։
Եղիր դու մերը. մեր վիճակի հետ
Մեր աղքատութեան՝ անկախութեան հետ
Լաւ ընտելացիր, իսկ էգուցւանից
Ճանապարհ կընկնինք մի սայլի վրայ.
Բայց այստեղ մի գործ քեզ համար բռնիր,
Կամ երկաթ ծեծիր, կամ երգեր երգիր,
Կամ թէ գիւղէ գիւղ արջը ման ածա։

Ալեքօն

Զատ լ՝սւ, կըմընամ։

Զեմֆիրան

Սա իմն է, իմը—
Էլ ով ինձանից սրան կարայ խլել.
Բայց արդէն ուշ է... մըտաւ լուսինը,
Մութ մառախուղը դաշտերն է պատել.
Քունս տանում է....

Արդէն բացւում է
Ծէգը. ծերունին հանդարտ շրջում է
Ամուրիների վրանի շուրջը լուռ։
«Վեր կաց, Զեմֆիրա, արևն ելնում է
Հերիք է, հերիք, զարթիր, դու իմ հիւր.
Վերկացէք, որդիք, փափկութեան մահճից։
Ու դուրս են թափւում արդէն վրաններից
Ամենքն աղմուկով, վրաններն հաւաքում
Սայլերը ճանպի համար պատրաստում,
Զարժւում միասին բոլորը յանկարծ.
Անցնում են դատարկ դաշտերի միջով.
Իշերն են տանում ուրախ երեխանց
Իրանց վրայ գրցած բաց խուրջիններով.
Կանայք, աղջկէք, եղբայր, ամուսին,
Թէ ծեր թէ մանուկ, գնում են միասին —

Ծիծաղ, աղաղակ, երգ գնչուների,
Արջի գոռոցը, նրա շղթաների
Անհամբեր շարժումն ու շխշըխկոցը,
Հորձերի սայծառ, նախշուն գոյները,
Ծերերի, մանկանց մերկութիւնները,
Պարկապըզուկի, սայլի ճռճռոցը —
Բոլորն անկարգ է ու աններդաշնակ,
Բայց այնքան ուրախ, կենդանի, արձակ,
Այնպէս օտար է մեր մեռած կեանքին,
Ինչպէս ստրուկների տաղտկալի երգին։

Երիտասարդը աչքը գըցում է
Դէպ ամայացած տխուր դաշտերը,
Բայց նա բացատրել համարձակւում չէ
Իրա տխրութեան գաղտնի պատճառը։
Նրա հետ է նըրա թուխաչ Զէմֆիրան։
Հիմա նա ազատ բնակիչ է երկրի
Ու միջօրէի արևըն անգամ
Նայում է այնպէս պայծառ, դուրալի.
Բայց ինչու նըրա սիրտը դողում, է
Ի՞նչ հոգս է արդեօք, որ նրան ճնշում է.
Անհոգ թռչունն աշխատում է
Առանց հանգիստ ողջ օրեր,
Բայց իր համար նա կարում չէ
Մի մշտական բոյն հիւսել։
Ննջում է նա ծառի ոստին,
Բայց երբ արևն է ծագում,
Նա ունկնդիր Տիրոջ ձայնին—
Թափ է գալիս ու երգում։
Հրաշագեղ գարնան ետևից
Այրող ամառն է շտապում

Եւ մառախուղ, ցուրտ, փոթորիկ
Աշունն է իր հետ բերում.
Մարդիկ կախել են յօնքերը
Թռչունն հեռու է թռչում,
Կտրում կապուտակ ծովերը,
Անցնում աշխարհ տաք, սիրուն։
Ինչպէս թռչունը, անհոգ թռչունը
Նա նոյնպէս—չքող աքսորականը
Չունէր իր համար մի մշտական
Ու ոչ մի բանին նա չէր հաստատում։
Ամեն տեղ ճանպան նրա առաջ բաց էր,
Ամեն տեղ կար նրա գիշերօթիկը.
Զարթում էր միշտ վաղ և նըւիրում էր
Աստըծու կամքին նա ամբողջ օրը.
Եւ նրրա սրտի թըմրութիւնը չէր
Կարում վրդովել կեանքի շըփոթը։
Նրրան երբեմըն կախարդիչ փառքի
Հեռաւոր աստղը իրան էր գրաւում,
Երբեմըն փայլը ճոխ, հարուստ կեանքի
Նրրա աչքին էլ էր փայլատակում,
Եւ քիչ անգամ չէր, երբ կայծակնալի,
Նրա անտէր գլխին ամպն էլ էր գոռում,
Բայց նա անհոգ էր. թէ կայծակների,
Թէ արևի տակ հանգիստ էր քնում,
Եւ նա ազատ էր. որ նենգ, կոյր բախտի
Իշխանութիւնը նա չէր ընդունում,
Բայց Տէր Աստուած իմ, նրա զգայուն սրտի
Հետ ինչպէս էին կրքերը խաղում,
Ի՞նչպէս կատաղած նրանք եռում էին
Նրրա էն տանջւած, մաշւած կրծքի մէջ,
Երկար նրանք հանդած պլտի թըւային.
Ո՞չ, նրանք կրգարթեն յանկարծ, կըտեսնես։

ԶԵՄՖԻՐԱՆ

Ասա, իմ ընկեր, դու չե՞ս ափսոսում
Այն բանի մասին, ինչ որ թողել ես։

ԱԼԵՖՕՆ

Ես ի՞նչ եմ թողել.

ԶԵՄՖԻՐԱՆ

Դու չե՞ս հասկանում—
Մարդիկ, քաղաքները, ուր միշտ ապրել ես։

ԱԼԵՖՕՆ

Ինչո՞ւ ափսոսալ. թէ գիտենայիր,
Երևակայել թէ կարենայիր
Հարկութիւնը այդ քաղաքների,
Որտեղ մարդիկը խեղդուած են ապրում
Զուրկ առաւօտեան զովաշունչ օդից,
Ձքեղ մարդերի գարնային հոտից.
Ուր կամք, համոզմունք փողով են ծախում,
Սիրուց ամաչում, մտքերն են ծածկում,
Ուր կուռքի առաջ գլխներն են թեքում,
Ու փող, շղթաներ են միայն փնտրում։
Ի՞նչ եմ թողել ես։ Դաւաճանութեան
Տըւած յուզմունքը, նախապաշարման,
Դատավճիռը, անմիտ հալածանք
Տխմար ամբոխի, կամ թէ պլպլան
Գոյներով ներկուած մի խայտառակ կեանք։

ԶԵՄՖԻՐԱՆ

Բայց կան ահագին այնտեղ պալատներ
Այնտեղ կան գոյն գոյն թանկագին գորգեր,
Այնտեղ կայ զբօսանք. խնջոյք, կերուխում.
Աղջիկանց զարդն է հարուստ ու փայլուն։

ԱԼԵՖՕՆ

Ի՞նչ է քաղաքի ուրախութիւնը.
Այնտեղ, ուր չըկայ պարզ, անկեղծ սէրը

Երբէք տեղ չունի այդ ցնծութիւնը.
Իսկ աղջիկները... որքան սիրուն ես
Նրանցից առանց շքեղ զարդերի,
Առանց մարգարտի և մանեակների.
Մի փոխուիր, հոգիս, այդպէս դու լաւ ես,
Իսկ ես... չեմ ուզում ոչինչ աւելի,
Եթէ ոչ քեզ հետ բաժնել իմ սէրը,
Իմ աքսորանքիս բոլոր ժամերը։

Ծերունին

Դու սիրում ես մեզ, թէպէտ ծրնւած ես
Հարուստ ու փարթամ ժողովրդի մէջ,
Բայց նրան, ով սովոր է փափուկ կեանքի,
Ազատութիւնը միշտ չէ սիրելի։
Մի աւանդութիւն պահւում է մեր մէջ.
Մի զօրեղ արքայ մեզ մօտ աքսորեց
Մի մարդ հարաւի հեռու աշխարհից
(Առաջ գիտէի։ բայց հիմա մտքիցս
Ընկել է նրա դժւար անունը).
Թէպէտ նա ծեր էր արդէն տարիքով,
Բայց ջահել, զբաղթ իր անբիծ հոգով,
Ձայնը քաղցր, ինչպէս ջրի կարկաչիւնը,
Բացի սրբանից նա մի ճիրք ունէր —
Հիւսում էր սիրուն, հրաշալի երգեր։
Եւ ամենքը նրան սաստիկ սիրեցին.
Դանուբի ափին մենակ ապրում էր,
Առանց վնաս տալու մարդուն, ամենքին.
Պատմում էր սիրուն վէպեր, հէքեաթներ։
Նա փուչ աշխարհից բան չէր հասկանում.
Թոյլ էր ու անոր երեխայի պէս,
Եւ ուրիշները նրա համար որսում
Էին գազաններ ու ձկներ պէսպէս։
Երբոր սաւչում էր սրբընթաց գետը,

1702
3037

Զմեռուայ մըրրիկը սուլում, մռընչում,
Նրանք գաղանի մորթու հագուստը
Այդ սուրբ ծերուկին էին հագցընում.
Բայց չէր կարենում նա ընտելանալ
Այս թշուառ կեանքի հոգսերին երբէք—
Նա թափառում էր աղքատ ու նիհար.
Նա ասում էր, թէ գործել է մի մեղք
Եւ դրա համար Աստուած պատժում էր
Եւ ապրում էր նա փրկութեան յուսով,
Եւ միշտ թշուառը տխուր, տրտում էր,
Եւ Դանուբ գետի շուրջ թափառելով
Յաճախ թափում էր աղի արցունքներ
Իր հայրենիքը մրտաբերելով...
Եւ նա կրտակեց մեռնելու ժամին,
Որ հարաւ տանեն իր ոսկորները.
Որքան չըպիտի հանգստանային
Օտար աշխարհում... Եւ մեռաւ ծերը։ *)

Ալեքօն

Օ՜հ, ինչ է եղել քո որդոց բախտը,
Ով Հռոմ, յաղթութեան աշխարհ կա-
խարդիչ,
Դէհ, ասա՛, ասա, ինձ, ի՞նչ է փառքը
Ով աստուածների և սիրոյ երգիչ,—
Խօսուն շիրիմը, պարծանքի ձայնը,
Որը սերունդից սերունդ է անցնում,
Թէ ծրլսով լցած վրանի միջում
Վայրի գնչուի խեղճ պատմութիւնը։

---

*) Գնչուի պատմած աւանդութիւնը վերաբերում է Հռոմի հռչակաւոր բանաստեղծ Օվիդիոսին։ Օգոստոս Կայսրը կասկածելով իր քրոջ Յուլիայի եւ Օվիդիոսի սիրային յարաբերութիւններին վրայ՝ վերջինիս աքսորեց Սեւ ծովի հիւսիսային կողմերը։

Երկու տարուց յետ կրկին թափառում
Են գնչուները խմբով, ինչպէս միշտ,
Եւ ամենայն տեղ նրանք են գտնում
Հիւրասիրութիւն և քաղցր հանգիստ։
Արհամարելով լուսաւորութեան
Կապերն, ազատ է նրանց պէս Ալեքօն,
Նա անց է կացնում իր աստանդական
Օրերն, ոչ ցաւում, ոչ էլ ափսոսում։
Նոյնն է նա. նոյն է և ընտանիքը.
Չի յիշում անգամ օրերը նախկին,
Նա սովորել է գընչուի կեանքին.
Նա սիրում է նրանց գիշերութիկը,
Նրանց ծոյլ կեանքի հրապուրանքները,
Նրանց, թէպէտ աղքատ, բայց հնչուն լեզուն։
Նրա վրանի մշտական հիւրը
Իր որջին օտար թաւամազ արջը
Ճանպին պատահած տների բակերում
Զրջապատող զգոյշ ամբոխի առաջ
Գոռում է բարձր՝ ու ծանրը խաղում
Եւ ճանճրացընող շղթան կրծոտում։
Ծերուկը կութնած իր ճանապարդական
Գաւազանի վրայ դայրա է ածում,
Ալեքօն երգով արջն է շրջեցնում,
Իսկ նուէրները ժողվում Զեմֆիրան։
Գիշերն է հասնում նրանք երեքեան
Դեռ ևրս անհունձ ցորենն են եփում.
Ծերուկն է քընում.—լուռ է ամեն բան...
Խաղաղ է, հանգիստ ու մութ է վրանում։

———

Ծերունին գարնան կարմիր արևում
Սառած արիւնը տաքացընում է.
Աղջիկն օրրոցի մօտ սէր է երգում.

Ալեքսն լըսում ու տժգունում է։

ԶԵՄՖԻՐԱՆ (Երգում է)

Իմ ծեր մարդ, իմ չար մարդ,
Մորթիր ինձ, այրիր ինձ,
Հաստատ եմ, չեմ վախում
Ո՞չ սըրից, ոչ կրակից։
Կորիր, քեզ ատում եմ,
Քեզ արհամարհում եմ.
Ուրիշին եմ սիրում—
Սիրելով մեռնում եմ։

ԱԼԵՔՍՆ

Լըռիր, քո երգը ինձ ձանձրացնում է։
Այդպէս վայրենի երգեր չեմ սիրում։

ԶԵՄՖԻՐԱՆ

Ես սիրում, շատ լաւ, բայց ի՞նչ իմ գործն է.
Ես ինձ համար եմ երգերը երգում.
Մորթիր ինձ, այրիր ինձ,
Քեզ ոչինչ չեմ ասիլ.
Իմ ծեր մարդ, իմ չար մարդ,
Նըրան չես ճանաչիլ։
Թարմ է նոր գարունը,
Տաք սիրուն ամառը,
Նըրանից առաւել
Թարմ է, տաք իմ եարը։
Էն խաւար գիշերը
Ո՞նց էր ինձ պաչպըչում,
Էդ ճերմակ մազերիդ
Ի՞նչպէս էր նա ծաղրում...

ԱԼԵՔՍՆ

Լըռիր, Զեմֆիրա, հերիք է, լըռիր...

ԶԵՄՖԻՐԱՆ

Ուրեմն հասկացար իմ երգի միտքը։

Ալեքօն

Զեմֆիրա . . .

Զեմֆիրան

Ի՞նչ է, կուզես բարկացիր,
Քեզ վրայ եմ ես երգում այս երգը.
Գնում է ու երգում «իմ ծեր մարդ, իմ
չար մարդ», եւ այլն։

Ծերուկը

Որդի, այդ երգը, շատ լաւ եմ յիշում,
Իմ ժամանակս էր, ով որ շարադրեց,
Արդէն շատ վաղուց երգւում է մեր մէջ
Դա ծաղրի համար։ Երբ մենք թափառում
Էինք Կաբուլի անապատներում՝
Այդ երգը ձմեռւայ մութ գիշերներում
Յաճախ երգում էր իմ Մարուլան,
Օրրելով կրակի առաջն աղջըկան։
Իմ մտքիս՝ միջում անցած օրերը
Հետըզհետ մթնում, կորչում են անհետ,
Բայց, օ այդ երգը, այդ թշւառ երգը
Զատ խորն է մըտել դաղւած սրտիս մէջ։

Լուռ է ու հանգիստ սիրուն գիշերը...
Կապոյտ երկինքը զուգել է լուսինն.
Արթնացընում է Զեմֆիրան հօրը.
„Վերկաց, վեր, հայրիկ, տես Ալեքօին...
Օ, լըսիր, լըսիր, թէ ինչպէս քընում
Տնքտընքում է նա, լալիս, հեկեկում...

Ծերուկը

Սսսս... ձեռք մի տար, լըռիր, հանգիստ
կաց։
Ես շատ անգամ եմ ռըսներից լսած,

Որ այս ժամանակ՝ կէս գիշերներին
Քնած մարդուն ճնշում է տանու ոգին
Եւ արշալուսի ծագելուց առաջ
Թողնում է նրան. մօտը կաց նստած։

ԶԵՄՖԻՐԱՆ

Հայրիկ, «Զեմֆիրա» է նա շշնչում.

ԾԵՐՈՒԿԸ

Նա գիշեր-ցերեկ քեզ է պրտռտում—
Դու նրա համար թանգ ես աշխարհից։

ԶԵՄՖԻՐԱՆ

Վաղուց սառել է նրա սէրն իմ մէջ.
Սիրտս ազատութիւն է հիմա ուզում.
Արդէն ես... բայց կաց, մի՞թէ չես լսում,
Ուրիշի անունն է նա շշշնչում։

ԾԵՐՈՒԿԸ

Անունն։

ԶԵՄՖԻՐԱՆ

Լսում ես խուպոտ տընքոցը
Եւ ատամների խիստ կրճտոցը...
Սարսափելի է... կարթնացնեմ իսկոյն.

ԾԵՐՈՒԿԸ

Զուր տեղ մի՛ քշիր գիշերուայ ոգուն,
Կրգնայ և ինքը։

ԶԵՄՖԻՐԱՆ

Նա շուռ է գալիս ...
Ահա գարթում է... տես, կանչում է ինձ...
Գնում եմ նրա մօտ. քնիր, ցրտեսութիւն։

ԱՂԵՕՆ

Ո՞ր էիր։

ԶԵՄՖԻՐԱՆ

Հօրրս հետ նստած էի։
Դու այս գիշեր շատ էիր չարչարում,

Մի ինչոր ոգի տանջում է քեզի...
Ես շատ վախեցայ. դու ատամներդ
Կրճտացնում էիր, անուշը տալի։

Ալեքսանդր

Զեմֆիրա. ես քեզ տեսայ երազում։
Ես տեսայ, իբբր թէ մեր մէջ արդէն...
Օհ, մի յիշեցնիր այդ երազները։

Զեմֆիրան

Դու մի հաւատար սուտ երազներին։

Ալեքսանդր

Ես ոչ մի բանի էլ չեմ հաւատում,
Ո՛չ երազներին, ոչ խոստումներին,
Եւ մինչև անգամ, ոչ էլ քո սրրտին։

Ծերուկը

Ո՛վ երիտասարդ, ասա, ինչու ես,
Ինչու ես ծանրը հառաչում այդպէս,
Չես տեսնում, այստեղ ազատ են մարդիկ,
Երկինքն է կապույտ, կանայք գեղեցիկ.
Մի՛ լար բարեկամ, կրմեռնիս դարդից։

Ալեքսանդր

Հայր իմ, Զեմֆիրան չի սիրում էլ ինձ։

Ծերուկը

Նա մանուկ է դեռ,սիրտդ հանգիստ պահիր,
Զուր ես անհանգիստ, զուր քեզ մի՛ տանջիր.
Դու սիրում ես դառն ու այրուած սրտով,
Նա սիրում թեթև, կարծես հանաքով.
Բայց նայիր, կապոյտ երկնքի վրայ
Ազատ լուսինը սեյրան է անում.
Բոլոր շրջակայ բընութեան վրրայ
Իր չքնաղ լոյսն է հաւասար թափում.
Տես, խաւար ամպին նա աչքով արաւ,

Ինչպէս նրան վառ-վառ փայլեցընում է.
Բայց այժմ՝ ուրիշի ծոցը նա մըտաւ,
Բայց նրան էլ երկար այցելելու չէ։
Նրրան երկնքում մի՞թէ կարող ես
Տեղ ցոյց տալ, ասել, թէ այդտեղ կանգնիր,—
Մատաղ աղջկայ սրտին, ինչ կասես,
Թէ սիրիր մէկին, մի դաւաճանիր.
Սիրտդ հանգիստ պահիր...

Ալեքօն

Ի՞նչպէս էր սիրում...
Ինչպէս քնքշութեամբ ինձ խոնարհւելո՞
Խաղաղ ու հանգիստ, լուռ գիշերում
Իր սիրաբորբոք քչփչոցներով
Ինձ երանական սէր էր խոստանում.
Ի՞նչպէս նա ուրախ թոթովանքներով,
Դիւթող, հարբեցնող իր համբոյրներով
Իմ տրտմութիւնը մի րոպէում նա
Գիտէր փարատել. իսկ հիմա, հիմա...
Այն չէ Զեմֆիրան, չի սիրում նա ինձ,—
Իմ... իմ Զեմֆիրան սառել է ինձնից։

Ծերուկը

Դէհ լըսիր, որդի, պատմեմ հիմա ես.
Իմ գըլխիս տխուր անցածները քեզ։
Վաղուց, շատ վաղուց, երբոր Դանուբին
Էր սպառնացել գոռոզ մոսկովցին
(Տեսնում ես հիմա, թշւառ բարեկամ,
Թէ հին վէրքերըս ինչպէս նորացան),
Վախենում էինք մենք փադիշահից.
Իսկ Աղքերմանի աշտարակներից
Յայտնի Բուջաղօմ փաշան էր հսկում։
Ես ջահիլ էի. սիրտըս եռում էր
Ուրախութիւնով, սպիտակին չէր տալ

Դեռ ոչ մի ալիք իմ սև մազերում։
Մի գեղեցկուհի կար մեր բանակում,
Երկար իմ մտքում նրան փայփայում
Ու սիրում էի և նա վերջապէս
Իմ կինը դարձաւ—նա էլ ինձ սիրեց։

Ջահելութիւնը, աւաղ, շատ արագ,
Փայլեց ու հանգաւ ընկնող աստղի պէս,
Բայց դու, ով քաղցր սիրոյ ժամանակ,
Թրռար աւելի արագ,—միմիայն
Մի տարի սիրեց Մարիուլան։

Լրսիր... Կագուլի ջրերի մօտերը
Իջան բանակով ուրիշ գնչուներ.
Այն գնչուները իրանց վրանները
Մեզ մօտ խրփեցին և երկու գիշեր
Անցկացրինք սարի տակը միասին։
Երրորդ գիշերը նրանք մեզ թողեցին,—
Եւ վայր գրցելով փոքրիկ աղջկան՝
Նրանց հետ գնաց իմ Մարիուլան.
Ես քընած էի. ծագեց արշալոյս.
Զարթում եմ, բայց չեմ գտնում սիրելուս,
Կանչում եմ... բայց ո՞ւր կրգտնես նրրան,—
Լալիս էր անմայր, որբուկ Զեմֆիրան.
Իմ լացս էլ եկաւ... Այդ ժամանակից
Բոլոր կիները սառեցան աչքիս.
Երբէք մտքովս չանցաւ՝ նրանց միջից
Մի ընկերուհի ինձ համար ընտրել,
Եւ սիրոյ ժամերս այն ժամանակից
Դեռ ոչ մէկի հետ ես չեմ բաժանել։

Ալեքօ

Բայց ի՞նչպէս, ինչու՞ դու չըշտապեցիր

Դաշոյնը ձեռքիդ նրանց ետևները,
Ինչու անխընայ դու չըպատռեցիր
Նըրանց դաւաճան ու լիրբ սրտերը։

Ծերուկը

Եւ ինչու համար. ջահելութիւնը
Ազատ է անհոգ թըռչնի կեանքից էլ.
Ի՞նչ մարդ կարող է իր սէրը զսպել,—
Հերթով է գալիս ուրախութիւնը.
Ինչոր տեսել ես, էլ այն չես տեսնիլ։

Ալեքօն

Ո՛չ, ես այդպէս չեմ. ոչ առանց կրուի
Իրաւունքիցըս ես չեմ հրաժարուիլ,
Գոնէ անպատճառ վրէժըս կլուծեմ...
Ծովի անդընդի վըրայ որ տեսնեմ
Թըշնամուս քընած, ես երդւում եմ,
Որ ոտքըս նըրան չէր խնայելու.
Կըհրէի առանց գունաթափելու
Նըրան կատաղի ժանտալիք ծովը.
Ամբողջ սարսափը նրա արթնանալու
Ես կընդմիջէի իմ ծիծաղովը
Եւ նրա ընկնելու թընդիւնը երկար
Ծաղրիս, հաճոյքիս նիւթ պիտի դառնար...

Ալեքօն քնած է, նա ծանր է շնչում.
Նա ինչոր խառն երազներումն է.
Յանկարծ ճըչում է, զարթում է մթնում
Եւ ձեռքն անկողին նա տարածում է.
Նա սարսափում է—նրա ձեռքն է ընկնում
Դատարկ ու սառը վերմակը միայն—
Ո՞վ գիտէ ուր է նրա Զեմֆիրան...
Նա վեր է կենում, ականջ է դնում...
Բայց շուրջը լուռ է, ոչ ձայն, ոչ ծպտուն։

Նա դողդողում է. նա վախենում է,
Սառն ու տաք հովը մարմնովն է անցնում.
Նա դուրս է գալիս դատարկ վրրանից.
Ահռելի դէմքով նա թրև է գալիս
Սայլերի շուրջը... բայց անդորրութիւն
Փրնաձ դաշտերի վրրան է տիրում.
Մութն է, լուսինը ամպերն է մտաձ,
Միայն աստղերը աղօտ լուսի տակ
Ցօղի վրայ տեսնում է ինչոր հետքեր...
Հետքերը հեռու բյուրն են գնում
Եւ նա ուղղում է քայլերն անհամբեր,
Ուր չարագուշակ հետքերն են տանում։

Նրա առաջ հեռու շաւիղի ծայրին
Մի ղերեզման է տալիս սպիտակին,—
Այն կողմն է քայլում անզօր ոտքերով.
Նա ճրնշւաձ ծանրը նախազգացումով.
Նրրա ծնօտներն իրար՝ են զարկւում,
Ծրնկներն են դողում... գրնում է...
ցանկարձ...
Սա երազ խօ չէ՞, քնաձ է թէ արթուն...
Յանկարձ տեսնում է նա իրան առաջ
Երկու ըստւերներ. ականջ է դնում—
Եւ նա անպատւաձ՝ ղերեզմանի վրայ
Տեսնում է... ամեն բանը աշկարա։

Առաջին ձայն

(Զեմֆիրան)

Հերիք է...

(Երկրորդ ձայն)

(Մի պատանի զնչու)

Դեռ կաց...

Առաջին ձայն

Հոգիս, հերիք է...

Երկրորդ ձայն

Ո՛չ, ո՛չ, կաց, մինչև լուսանայ։

Առաջին ձայն

Ուշ է։

Երկրորդ ձայն

Ա՜խ, այդ ինչպէս ես սիրում.. մէկ բոպէ...

Առաջին ձայն

Խայտառակ կանես դու ինձ, սիրելիս։

Երկրորդ ձայն

Մէկ բոպէ...

Առաջին ձայն

Եթէ մարդիս առանց ինձ դարթնի...

Ալեքօ

Զարթեցայ։ Է՛յ, մի՛ փախչիր, կաց.—
Երկուսդ էլ արդէն լաւ տեղ է.ք ընտրած —
Ձեզ շատ է յարմար հէնց այս դերեզմանն։

(Զեմֆիրան Գնչուին)

Փախի՛ր, սիրելիս, փախիր, օ՜, փախիր ..

Ալեքօ

Ո՞ւր, ո՞ւր, կաց, սիրուն պատանի, պառկիր,
(Դանակը խրում է նրա կուրծքը)
Պառկի՛ր...

Զեմֆիրան

Ալեքո՛։

Գնչուն

Մեռնում եմ...

Զեմֆիրան

Գազա՛ն,
Սպանեցի՛ր նրան. դու շաղախուած ես
Արիւնով. անսի՛րտ, այդ ի՞նչ արիր...

Ալեքօն

Ո՛չինչ։ ԴԷՀ հիմա նրա սիրով շնչիր...

Զեմֆիրան

Ոչ, ո՛չ, հերիք է, չեմ վախում էլ ես,
Քո սպառնալիքդ արհամարհում եմ,
Ըսպանութիւնդ ես անիծում եմ։

Ալեքօն

ԴԷՀ, դու էլ մեռիր (դանակը խրում է եւ նրա կուրծքը)։

Զեմֆիրան

Սիրած մեռնում եմ...

Արդէն կարմրել է արեւելքը,
Բայց մարդասպանը բլրի ետեւը
Դանակը ձեռքին, արնում թաթախուած
Տապանաքարի վրայ է նստած.—
Նրա առաջ երկու դիակ կայ ընկած.
Սարսափելի է նրա պղտոր դէմքը...
Նրան գնչուները շրջապատում են
Հեռից վրդովուած ու վախվխելով.
Մի կողմը հողը նրանք փորում են.
Կանայք անցնում են լացով ու կոծով
Եւ մեռածների աչքերն համբուրում.
Մլայն ծերուկը նստած է, նայում
Մունջ մեռած դէմքով սիրած աղջկան.
Ահա դիակներ առան ու տարան—
Եւ սև ու խոնաւ հողին յանձնեցին
Անբախտ, անմուրազ սիրահարներին։
Ալեքօն նրանց նայում է հեռից։
Երբ հողի վերջին բուռը թափեցաւ.
Նա լուռ, թուլացած տեղից շարժուեցաւ

Եւ գետին ընկաւ տապանաքարից։
Այն ժամանակը վերկացաւ տեղից
Եւ դարձաւ նրրան ծերն սպառնալից.
«Թող մեզ, դոռոզ մարդ, հեռացիր մեզնից,
Մենք վայրենի ենք, մենք չունինք օրէնք։
Բայց չենք ըսպանում, մենք գիշատում չենք.
Ո՞չ տընքոց լսել, ո՞չ արիւն տեսնել.
Ո՞չ մարդասպանի հետ կուզենք ապրել.
Դու ազատութեան համար չես ծնւած
Երբ դու ես ուզում միայն լինել ազատ.
Քո ձայնն այսուհետ սարսափ կըբերի։
Մենք վախկոտներ ենք, բայց հոգով բարի—
Դու չար, համարձակ.—ուրեմըն թող մեզ,
Թող մեզ, մնաս բարով, գընա, Տէր ընդ քեզ,
Ասաց ծերուկը և աղմկալից
Այն թափառական բանակը չըւեց
Սարսափով լցւած մահաշունչ հովտից
Եւ հեռու շուտով ամեն բան ծածկւեց
Տափաստանումը. մի սայլ միմիայն
Ծածկւած քրքըւած ու մաշւած գորգով
Կանգնած էր անշարժ այն օրհնւական
Դաշտի մէջ։ Այսպէս, երբ ուշ աշնանը
Խոնաւ, մըշուշոտ, միգապատ օրով
Դաշտից բարձրանում կռընկի երամը
Եւ աղաղակով հարաւ է թռչում,
Մէկը հրացանի գնդակով խոցւած
Մընում է մենակ, անտէրունչ դաշտում
Իրան վիրաւոր թևը քարշ արած։
Հնսաւ գիշերը, բայց մութ սայլի մօտ
Զրկար մէկ հոգի, որ կըրակ վառէր.
Զրկար մէկ հոգի, որ մինչ առաւօտ
Զարժուն չարկի տակ քընում երազէր....

ՎԵՐՋԵՐԳ

Երգի կախարդիչ զօրութիւնովը
Իմ մառախլապատ յիշողութեան մէջ
Պատկերանում են իմ տեսածները
Թէ ուրախ, թէ մռայլ բոպէների մէջ։
Այն երկրի մէջ, ուր պատերազմական
Ահեղ թնդիւնը երկար չէր լրում,
Ո ր յաղթող ռուսը հրամայողական
Հայնով Ստամբոլ սահմանն էր կարճում,
Ոչ բովրս տեսայ տափաստաններում
Հին բանակների կանգնած տեղերում
Խաղաղ սայլեր ես գնչուների—
Մեղմ—անկախութեան այդ զաւակների։
Անապատներում պարապ ես նրրանց
Խմբի ետևից թափառում էի,
Ես քընում էի նրանց կրակի առաջ։
Պարզ կերակուրը բաժանում էի
Այս ճանապարդութեան մէջ սիրում էի
Ես նրանց ուրախ երգի հնչիւնը,
Երկար-երկար ես կրկնում էի
Մարիուլայի քնքոյշ անունը։
Բայց երջանկութիւն չրկայ և ձեր մէջ,
Ով դուք բընութեան թշւառ զաւակներ։
Եւ այդ ճոթրուտած վրրանների մէջ
Ապրում են տանջող, մաշող երազներ.
Եւ անապատում ձեր թափառական
Ցարկը չազատեց գալոց փորձանքից.
Ամեն տեղ հիմա—կիրք օրհասական
Ոչ ոք չի փախչում բախտի հարուածից։

Գ. Սաֆրազարեան

Գիրքը ենթարկվել է ախտահանման

— — —42 թ.